


ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ՄԱՄԻՆ

Եթէ մեղքերուդ համար թողութիւն կ'ուզես, հրաւիրէ որբերը, այրիները, վշտահարները, տառապածները, դժբախտները, անդամալոյծները, կոյրերը, կաղերը, կարիքաւորները, բանտարկեալները, բոլոր անօթիները եւ անմիթարները: Միթարէ՛, սփոփէ՛ եւ կերակրէ՛ զանոնք: Միայն անոնց ծառայէ, անոնց շնորջ դարձիր, ուրախացո՛ւր եւ պատուէ՛ զանոնք քաղցր խօսքերով, որպէսզի մեղքերուդ թողութիւն եւ տանդ փրկութիւն ստանաս: Այսպէս կազմակերպէ՛ քու ընդունելութեանդ հրաւերները եւ աղատներուն ու թշուառներուն հրաւերին մէջ հարուստները եւ բարձր դասակարգը նկատի մի՛ ունենար, որպէսզի անոնք, (աղատները) նախագահեն ու անոնք ըլլան առաջինները: Անոնք թող նստին սեղանին վերը եւ վարը: Միայն զանոնք ներս հրաւիրէ աղաչանով եւ նամբո՛ւ դիր աղերսանով: Եթէ այսպէս հիւրընկալես, ոչ թէ տուած, այլ՝ առած կ'ըլլաս, ոչ թէ ծախած, այլ՝ մեծ շահ մը ապահոված ու նաեւ թողութիւն ստացած կ'ըլլաս: Ասոր համար էր, որ Քրիստոս կ'ըսէ. «Երբ հրաւեր կու տաս, հարուստները մի՛ կանչեր» որպէսզի անոնց տրուած ուշադրութեան պատճառաւ աղատները արհամարհուած չզգան եւ դուն, քու կողմակալութեանդ պատճառաւ չդատապարտուիս, որպէս օրինագանց մը նման անոր, որ կ'ըսէ. «Ան, որ գեղեցիկ հագուստներ հագած է, պէտք է անոր ըսէ՛. պատիւ ըրէ՛, այստեղ նստէ՛» իսկ աղատներուն պիտի ըսէ՛. «Գնա՛ եւ սանդխամատին ծայրը նստէ՛» ու այդպէս ընելով չար մտածումներու դատաւոր պիտի դառնա՛, որովհետեւ հարուստները ընդունելով մեղք կը գործէ՛ եւ դուք իբրեւ օրինագանցներ կը մեղադրուի՛ք օրէնքով:

Յովհան Մանդակունի Ճառեր

Ի՞ՆՉ ՀԱՆԴԻՍԱԿՈՐՈՒԹԵԱՄԲ ԿԸ ԿԱՐԴԱՅՈՒԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ



Աւետարանի ընթերցումը միւս բոլոր ընթերցումներէն շատ աւելի մեծ բացառութիւն ունի: Չայն կը կարդան առանձին հանդիսատուութեամբ: Սարկաւազը կը ձայնէ Օրթի (Ոտքի). քահանան՝ Խաղաղութիւն ամենեցուն (Խաղաղութիւն ամենուդ). դպիրները՝ եւ ընդ հոգւոյդ քում (Նաեւ քո՛ւ հոգիիդ). սարկաւազը՝ երկիւղածութեամբ լուարուք (Երկիւղածութեամբ մտիկ ըրէ՛ք). Աւետարանը կարդացողը՝ Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի, որ ըստ Մատթէոսի (Յիսուս Քրիստոսի Աւետարանը՝ Մատթէոսի համաձայն). դպիրները՝ Փառք քեզ Տէր Աստուած մեր (Փա՛ռք քեզի, Տէր Աստուած մեր). սարկաւազը՝ Պռոսխումէ (Մտիկ ընէ՛նք). ժողովուրդը՝ ասէ Աստուած (Աստուած է, որ կը խօսի):



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՌՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԸԱԽԻՆՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ԺԶ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 14 ՄԱՅԻՍ 2023 ԹԻՒ 20

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ Գրծ. 20.17-38: Ա. Յհ. 3.2-6: Յհ. 9.39-10.10:

Աւետարան ըստ Յովհաննէսի 9.39-10.10

Յիսուս ըսաւ. «Աշխարհ եկայ յայտնելու, թէ որո՞նք են կոյրերը եւ որոնք՝ տեսողները, որպէսզի կոյրերը տեսնեն եւ անոնք, որ կը տեսնեն՝ կուրնան»  
Փարիսեցիներէն ոմանք, որոնք իր շուրջն էին, լսեցին ասիկա եւ հարցուցին. «Արդեօք մե՞նք ալ կոյր ենք»:  
Յիսուս անոնց պատասխանեց. «Եթէ կոյր ըլլայիք, մեղք պիտի չունենայիք, բայց քանի կ'ըսէք, թէ կը տեսնէք, կը նշանակէ՛ թէ ձեր մեղատու ըլլալը կը հաստատէ՛ք: Հաստատ գիտցէ՛ք, ան, որ ոչխարներուն փարախը դռնէն չի մտներ, այլ՝ ուրիշ տեղէ կը մազլցի, անիկա գող է եւ աւազակ. իսկ ան, որ դռնէն կը մտնէ՛ անիկա ոչխարներուն հովին է: Գռնապանը դուրը կը բանայ անոր եւ ոչխարները իր ձայնին կը հետեւին: Իրենց անուններով կը կանչէ իր ոչխարները եւ դուրս կը տանի զանոնք: Եւ երբ իր ոչխարները դուրս կը հանէ, ի՞նք կ'առաջնորդէ եւ ոչխարները կը հետեւին իրեն, որովհետեւ իր ձայնը կը ճանչնան: Օտարին չեն հետեւիր. ընդհակառակը, կը փախչին անկէ, որովհետեւ օտարներու ձայնը չեն ճանչնար»:  
Յիսուս այս առակը խօսեցաւ անոնց, սակայն անոնք չհասկցան, թէ ի՞նչ ըսել կ'ուզէր իրենց: Ուստի Յիսուս կրկին ըսաւ անոնց. «Հաստատ գիտցէ՛ք, թէ ե՛ս եմ ոչխարներուն դուր: Բոլոր անոնք, որոնք ինձմէ՛ առաջ եկան, գող էին եւ աւազակ, բայց ոչխարները անոնց չհետեւեցան: Ես եմ դուր: Ով, որ ինձմէ՛ անցնելով ներս մտնէ՛ պիտի փրկուի, պիտի մտնէ եւ ելլէ եւ ճարակ գտնէ: Գողը կու գայ միայն գողնալու, սպաննելու եւ փճացնելու համար: Ես եկայ, որպէսզի կեանք ունենան եւ լեցուն կեանք ունենան»:

Յովհաննէս Աւետարանիչը բաղդատութիւն մը կ'ընէ Բարի Հովիւին ու վարձկանին, հարազատին եւ օտարին, անկեղծին ու ստախօսին միջեւ: Առաջինը՝ բարի է, իսկ երկրորդը՝ չար: Առաջինը ոչխարները արածողն է, անոնք իրենիկներն են, անոնց հովին է: Ան՝ փարախի դռնէն կը մտնէ, կը ճանչնայ ոչխարները, ոչխարներն ալ կը հետեւին՝ Անոր, ո՛ւր որ ուզէ եւ կեանք կու տայ անոնց դալար արտերուն մէջ: Երկրորդ անձնաւորութիւնը գող է եւ աւազակ, դռնէն չի մտներ, այլ՝ պատէն մազլցելով՝ գողուի փարախ կը մտնէ՛ կը սպաննէ ու ջարդ ու փշուր կ'ընէ, օտարական մըն է ան ոչխարներուն համար, անոնք փախուստ կու տան իրմէ:

ՀԱՄԱՐՁՈՒՄ

Քրիստոս իր հրաշափառ յարութեան 40 օր ետք երեւցաւ իր աշակերտներուն, անոնց հետ խօսելով Աստուծոյ արքայութեան մասին:

Քառասուներորդ օրը Յիսուս պատուիրեց աշակերտներուն Երուսաղէմ մնալ մինչեւ Պենտեկոստէի օրը, երբ Ս. Հոգին պիտի իջնէ երկինքէն եւ բնակի անոնց մէջ:

Այնուհետեւ իր աշակերտներուն հետ Քրիստոս Չիթենեաց լեռը բարձրացաւ, ուր օրհնեց զանոնք: Եւ երբ կ'օրհնէր երկինք բարձրացաւ բոլորին աչքին առջեւ: Երբ տակաւին առաքելները իրենց աչքերը երկինք յարած՝ Յիսուսի մեկնիլը կը դիտէին, ահա երկու սպիտակազգեստ մարդիկ երեւցան անոնց եւ ըսին.

–Ո՛վ Գալիլիացիներ, ինչո՞ւ կեցեր երկինքը կը դիտէք: Այս Յիսուսը, որ երկինք համբարձաւ, օր մը դարձեալ պիտի գայ այնպէս՝ ինչպէս անոր երկինք երթալը տեսաք:

Քրիստոս համբարձաւ, որպէսզի երկինքը երկրին միատրէ եւ աստուածացնէ ու փառատրէ մարդկային բնութիւնը:

Ան երկինք ելաւ եւ նստաւ Հօրը աջ կողմը առանց լքելու իր սիրելի առաքելները եւ բոլոր անոնք, որոնք կը հաւատան եւ կը սիրեն զինք:

Յիսուս ըսաւ.

«Ես ձեզի հետ եմ, մինչեւ աշխարհի վերջը»:

– Որո՞նք են մարմնին թշնամի եւ կործանարար մոլութիւնները:

Եօթը մահացու մեղքեր կան, որոնք կը ծուարին մարդու ներսիդին եւ կը կրծեն զայն:

1.– Հպարտութիւնը կը կործանէ մարդը: (Սոսկ. ԻԹ.23):

2.– Նախանձը ոսկորներու փտութիւն է: (Սոսկ. ԺԴ.30):

3.– Բարկութիւնը մարդուն վնաս կը պատճառէ (Սոսկ. ԺԹ.19), կը ցնցէ մարմինը ու կը տկարացնէ ջիղերը:

4.– Ծուլութիւնը իրեն ենթական կ'աղփատացնէ ու կը մեղցնէ: (Սոսկ. Ի. 13, ԻՍ.25):

5.– Ագահութիւնը իրեն անձնատուր երողները կը մեղցնէ: (Սոսկ. Ա.19):

6.– Որկրամոլութիւնը (որուն ծիրին մէջ կ'իյնան նաեւ արբեցութիւնն ու ծիսամոլութիւնը) բազմաթիւ հիւանդութիւններու դուռ կը բանայ: Ամենայն քաղցրահամ եւ օգտակար ուտելիքը՝ մեղրն անգամ, եթէ մէկը անյագօրէն քաշակէ, զայն կը փսխէ ու իր մարմնին առողջութեան վնաս կը բերէ: (Սոսկ. ԻԵ.16,27): Իսկ խմիչքներն ու ծխախոտի մոլութիւնները մարդու մարմինը կը գործեն այլազան հիւանդութեանց վիհին մէջ:

7.– Բղջախոտութիւնը կ'ապականէ մարմինը, միտքն ու հոգին, ու մարդը կը մղէ դէպի անբարոյութիւն: (Մատթ. ԺԵ. 19):

Այս եօթը մոլութիւնները մարդուն մէջ կը յառաջացնեն անձնասիրութիւն, փառասիրութիւն, ցանկութիւն, անտեղի դժգոհութիւն, մտահոգութիւն, ջղաշիւն խանգարում, մեղամաղձոտութիւն եւ սրտի խռովութիւն:

ՓՈՐՁՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԴԻՄԱԿԱԶԵՐՄԵՆ ՄԱՐԴԸ

Կասկածէ վեր է, որ փորձութիւնն ու դժուարին պահերն են, որ մեր իսկական նկարագիրն ու հաւատքը հանդէս կը բերեն: Առհասարակ բոլորը կը ջանան խաղաղասէր ձեւանալ, որպէսզի ծածկեն իրենց իրական նկարագիրը: Խռովիչ պահուն դիմաց աշխարհի մարդը սակայն չի կրնար իր խաղաղութիւնը պահել: Փորձութիւնը կը դիմակագերծէ զայն: Բայց տարբեր է վերածնած քրիստոնէայ մարդուն պարագան, որ իր կեանքին մէջ ընդունած է խաղաղութեան Իշխանը՝ Քրիստոս: Ան կեանքի փոթորիկներուն դիմաց կրնայ պահել իր հանդարտութիւնը, իր խաղաղութիւնը, իր գեղեցկութիւնը, ճիշդ այնպէս՝ ինչպէս աստղը իր խաղաղութիւնն ու գեղեցկութիւնը կը պահէ ամպրոպներու մէջ:

ՄԻՇՏ ԱՂՕԹԵՆՔ

Տէ՛ր, մօտդ կանչէ՛ մեղանչած անձս, որովհետեւ չեմ համարձակիր մերձենալ քեզի, կը պատկառիմ ամօթէն եւ զարհուրիմ իմ գործերէս: Համարձակութիւն չունիմ Քու առջեւ, որովհետեւ ինքզինքս կորուստի մատնած եմ: Հեռացայ Քու սուրբ պատուիրաններէդ եւ մերկացայ Քու փառքէդ, բայց Դո՛ւն, Տէ՛ր, գրա՛ եւ ողորմէ՛ ինձի, որովհետեւ Քու անարատ ձեռքերդ ստեղծածն եմ:

Եփրեմ Ասորի

ԵԹԷ Կ՛ՈՒԶԵՍ ԳԻՏՆԱԼ, ԹԷ Ի՛ՆՉՊԵՍ ՊԻՏԻ ՅԱՅՏՆՈՒԻ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ, ԿԱՐԴԱ՛ Մաղմուս 9

Ամբողջ սրտովս գոհութիւն պիտի մատուցանեմ՝ քեզի, Տէ՛ր, եւ քու բոլոր սխալների գործերդ պիտի թուեմ: Քեզմով պիտի ուրախանամ ու ցնծամ, եւ ներբողեմ քու անունդ, ո՛վ Բարձեալ:

Թշնամիներս նահանջի նամբան բռնեցին, քու դիմացդ տապալեցան ու կորուստի մատնուեցան, որովհետեւ դուն, Ո՛վ արդար Դատաւոր, քու գահիդ բազմած՝ իմ դատս եւ իրաւունքս պաշտպանեցիր: Հեթանոսները յանդիմանեցիր, ամբարիշտները կորուստի մատնեցիր եւ անոնց անունը յաւետ ջնջեցիր: Թշնամին ընդմիշտ խորտակուեցաւ, անոնց քաղաքները հիմնահատակ կործանեցիր, եւ անոնց յիշատակն անգամ կորուսեցաւ: Բայց Տէ՛ր՛ կայ ու կը մնայ յաւիտեան: Ան Իր աթոռը նստաւ եւ պատրաստ է դատաստանի:

Արդարութեամբ պիտի դատէ աշխարհը եւ ուղիղ դատաստան պիտի ընէ ժողովուրդներուն: Տէ՛ր՛ ինձ ապաւեն պիտի ըլլայ անիրաւուածին, ապաստան պիտի ըլլայ նեղութեան ժամանակներուն: Անոնք, որ քեզ կը նահանջան, ո՛վ Տէ՛ր, քեզի պիտի վստահին, որովհետեւ դուն չե՛ս լքեր անոնք, որոնք քեզի՛ պիտի կը դիմէն: Ներբող՝ քեզեցե՛ք Տիրոջը, որ Սիոն կը բնակի, բոլոր ազգերուն մէջ պատմեցե՛ք անոր գործերը, որովհետեւ ան՝ որ բոլոր ունիւրներուն համար հաշիւ կը պահանջէ, յիշեց տառապողները, չմոռցաւ անոնց աղաղակը:

ՄԻՇՏ ՍԱՂՍՈՍ ԿԱՐԴԱՆՔ